

## Անկյուններ

Մեկ կետից դուրս եկող 2 ճառագայթներով կազմված պատկերը կոչվում է **անկյուն**:


Անկյուն կազմող ճառագայթները կոչվում են անկյան կողմեր, իսկ այն կետը, որից նրանք դուրս են գալիս, կոչվում է **անկյան գագաթ**:

Որպես անկյունների չափման միավոր վերցվում է **աստիճանը ( $1^\circ$ )**:

Անկյուններ կառուցելու և չափելու համար օգտագործում ենք փոխադրիչը՝




Անկյունները լինում են՝ ուղիղ, սուր, փոփած ու բութ :



Ուղիղ

անկյունը  $90^\circ$  է,  $\sphericalangle B=90^\circ$

**$\sphericalangle B$ -ն ուղիղ անկյուն է:**




Սուր անկյունը փոքր է  
ուղիղ անկյունից:


$\sphericalangle A$ -ն սուր անկյուն է,  $\sphericalangle A < 90^\circ$

Ուղիղ անկյունից փոքր անկյունը կոչվում է սուր անկյուն:

Այն անկյունը, որի կողմերը կազմում են մեկ ուղիղ, կոչվում է փոփած  
անկյուն: Փոփած անկյունը  $180^\circ$  է:




$\sphericalangle D$ -ն փոփած անկյուն է,  $\sphericalangle D = 180^\circ$



Բութ անկյունը մեծ է ուղիղ անկյունից ու փոքր է փոփած անկյունից:

$\sphericalangle C$ -ն բութ անկյուն է,  $90^\circ < \sphericalangle C < 180^\circ$

Այն ուղիղները, որոնց հատումից ստացվող անկյուններն ուղիղ են, կոչվում են ուղղահայաց ուղիղներ:



Անկյունների առավել ճշգրիտ չափումների համար օգտագործում են աստիճանի մասերը՝

բոլոր <<'>> և վայրկյան <<''>> :

$$1^{\circ}=60'$$

$$1'=60''$$

$$1^{\circ}=3600''$$

### Առաջադրանքներ

- Ի՞նչ է անկյունը:

Մեկ կետից դուրս եկող երկու ճառագայթներով կազմված պատկերը կոչվում է անկյուն:

- Ո՞րն է անկյունների չափման միավորը:

Անկյունների չափման միավորը աստիճանն է:

- Քանի՞ աստիճան է ուղիղ անկյունը:

Ուղիղ անկյունը  $90^{\circ}$  է:

- Քանի՞ աստիճան է փռված անկյունը:

Փռված անկյունը  $180^{\circ}$  է:

- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում սուր անկյուն:

Ուղիղ անկյունից փոքր անկյունը կոչվում է սուր անկյուն:

- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում բութ անկյուն:

Ուղիղ անկյունից մեծ անկյունը կոչվում է **բութ անկյուն**

- Ո՞ր ուղիղներն են կոչվում ուղղահայաց ուղիղներ:

Այն ուղիղները որոնց հատումից ստացվող անկյուններն ուղիղ են կոչվում

են **ուղղահայաց**:

- Ինչպիսի՞ անկյուններ են  $35^\circ$ ,  $89^\circ$ ,  $90^\circ$ ,  $115^\circ$ ,  $18^\circ$ ,  $75^\circ$ ,  $45^\circ$ ,  $60^\circ$ ,  $130^\circ$  անկյունները:  
350-սուր 890-բութ 900-ուղիղ 1150-բութ 180-սուր 750-բութ 450- բութ 600- բութ 1300-բութ
- Ինչպիսի՞ անկյուններ են  $120^\circ$ ,  $180^\circ$ ,  $90^\circ$ ,  $115^\circ$ ,  $45^\circ$ ,  $75^\circ$ ,  $60^\circ$  անկյունները:  
1200 -բութ 1800- փռված 900 -ուղիղ 1150 - բութ 450 -սուր 750 - սուր 600 - սուր
- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե ուղիղ անկյունը նրա գազաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:  
450 կամ 1450
- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե փռված անկյունը նրա գազաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:  
900`ուղիղ
- Քանի՞ անկյուն կստացվի երկու ուղիղների հատումից: